Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՅԵՐԿՐԻ ՌԱԴԻՈՖԻԿԱՑՄԱՆ ՈՃԱՆԴԱԿՈՂ ՅԵՎ ՌԱԴԻՈ ՍԻՐՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ԿՈՄԻՏԵ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿԱՆՈՆՆԵՐ ՌԱԴԻՈ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋԻ ՄԱՍԻՆ

«Հաստատված Համ. ԼԿՑԵՄ Կենտկոմի կողմից»

384
4-21

ԵՐԵՎԱՆ 1933 Թ.

Գեղարքունի Տպարան

Գլավլիտ № 9367 (բ), Պատվեր № 2431, Տիրաժ 1500

Д 735
384
4-21

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

06 APR 2010

ԿԱՆՈՆՆԵՐ Ռ. Բ. Ը. ԲՋԻՋԻ ՄԱՍԻՆ

Ռ. Բ. Ը. բջիջը սովխոզում, կոլխոզում, ՄՏԿ-ում ձեռնարկության մեջ հանդիսանում է կազմակերպության հիմնական ողակը, ռադիո սիրողների կազմակերպող կենտրոնը և կազմում է Ռ.Բ. ռայոնական կամ քաղաքային ընկերության հիմքը, վորը համախմբում է տվյալ ռայոնի ռադիո սիրողների և ռադիո լսողների ակտիվին:

Ռ.Բ.Ը. բջիջի հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

1. Պայքար իր ձեռնարկության, կոլխոզի, սովխոզի, Մ. Տ. Կ. և դպրոցի ռադիոֆիկացիայի համար. ռադիոյի բոլոր ձևերի ներդրումը տնտեսության և կենցաղի մեջ:

2. Հասարակական հսկողության կազմակերպումը ռադիո-հաղորդման վորակի վրա և ամենորյա աշխատանքը նրա բարելավման համար:

3. Ռադիո-սիրողների փորձնական աշխատանքների կազմակերպումը և ոժանդակությունը նրանց ստեղծագործական աշխատանքներում:

4. Ռադիո դաղափարների պրոպագանդը (լերկար, կարճ, ուլտրակարճ այիքներ, հեռատեսությունը բանվորական և կոլխոզային մասսաներում, յերիտասարդության մեջ, ողտագործելով դրա համար կուլտ-մասսայական աշխատանքի բոլոր լծակները:

5. Ռադիոյի ողտագործումը տնտեսական-քաղաքական կամպանիաներն անցկացնելիս (ցանք, բերքահավաք և այլն):

07 MAY 2013

6. Մասսայական ռադիո-ուսուցման կազմակերպումը, Ռ.Բ.Ը. անդամներին ոգնելը ռադիո-տեխնիկային տիրապետելու գործում, կազմակերպելով դրա համար ռադիո-խմբակներ, կուրսեր, լեկցիաներ, ռադիո-հաղորդումներ և այլն:

ԲՋԻՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ռ.Բ.Ը. բջիջը կազմակերպվում է առնվազն ընկերության 3 անդամ լինելու դեպքում:

2. Ռադիո-սիրողների և ռադիո-լսողների նախաձեռնությամբ՝ կոմյերիտական բջիջի ղեկավարությամբ կազմակերպվում է բջիջը, վորը հաստատվում է և հետագայում ղեկավարվում Ռ.Բ.Ը. ռայոնական կամ քաղաքային խորհրդի կողմից:

Ռ.Բ.Ը. ԲՋԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ռ.Բ.Ը. անդամ կարող են լինել 16 տ. հասնող՝ ռադիոյով հետաքրքրվող բոլոր աշխատավորները: 10-16 տարեկան անձինք կարող են լինել Ռադիոյի Պատանի Բարեկամների խմբակներում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ռ.Դ.Ը. անդամ չեն կարող ընդունվել ընտրական իրավունքներից զրկվածները և իրենց արարքների համար Ռ.Բ.Ը. շարքերից վտարվածները:

2. Ռ.Բ.Ը. անդամը պարտավոր է՝

ա) Բջիջում տանել ակտիվ աշխատանք— աշխատել խմբակներում, մասնակցել անցկացվող մասսայական ձեռնարկումներին և ընկերության ամբողջ պրակտիկ գործունեությանը:

բ) Տիրապետել Ռ.Բ.Ը. սահմանած ռադիո-տեխնիկական գիտելիքների մինիմումին և սիստեմատիկաբար բարձրացնել իր ռադիոտեխնիկական մակարդակը:

գ) Նոր անդամներ ներգրավել Ռ.Բ.Ը. բջիջ և մասնակից անել նրա գործունեությանը:

դ) Ակտիվորեն ոժանդակել յերկրի, իր ձեռնարկության, կոլխոզի, սովխոզի և Մ.Տ.Կ. ռադիո կապ հաստատելու և ռադիոֆիկացիայի անցկացնելու և ամեն կերպ նպաստել ռադիոն աշխատավորության կենցաղը մտցնելու գործում:

յե) Հասարակական հսկողություն կատարել կոլեկտիվ ոգտագործման տակ գտնվող ռադիո ընդունող ցանցի և ռադիո հաղորդման վորակի համար և ոգնել նրա զարգանալուն:

զ) Կատարել բջիջի հանձնարարությունները տնտեսական-քաղաքական կամպանիաների ռադիո սպասարկման գործում:

Ռ.Բ.Ը. յուրաքանչյուր անդամ իրավունք ունի՝

1. Ընտրվելու Ռ.Բ.Ը. ղեկավար որգաններում:

2. Ռադիո մասերով, ռադիո գրականությամբ, ապարատուրայով և ակումուլյատորների լիցքի մատակարարման գործում առաջնություն ունենալու:

3. Ոգտվել իր փորձնական աշխատանքի համար ռադիո ակումբներից, կոլեկտիվ ռադիո կայաններից, արհեստանոցներից, լաբորատորիաներից և այլն:

Ռ.Բ.Ը. այն անդամները, վորոնք տվել են ռադիո մինիմումը, իրավունք ունեն կրելու ընկերության կրծքանշանը:

ԲՋԻՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԲՅՈՒՐՈՆ

1. Բջջի ղեկավար որգանը հանդիսանում է նրա անդամների ընդհանուր ժողովը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ընդհանուր ժողովը գումարվում է վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ և որինական է համարվում բջջի անդամների թվի կեսի ներկայության դեպքում:

2. Ընդհանուր ժողովի հայեցողությանը և քննությանը յենթակա յեն հետևյալ հարցերը՝

ա) Բջիջի բյուրոյի անդամների ընտրությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
59141.66

բ) ԲՋՋի բյուրոյի հաշվետվությունը, տարած աշխատանքի մասին և ԲՋՋի աշխատանքների պլանը։

գ) Ռադիոֆիկացիայի պլանները և ընթացքը սովխոզում, կոլխոզում, ՄՏԿ, ձեռնարկության մեջ և այլն։

դ) Տեղական ռադիո-հաղորդման դրությունը և վորակի հարցերը։

յե) Տնտեսական-քաղաքական կամպանիաների ռադիո սպասարկում։

զ) Ռադիո-տեխնիկայի հարցերը (դրությունը, նվաճումները)։

ե) Ռ.Բ.Ը. ընդունելություններ և հեռացումները։

3. ԲՋՋի բյուրոն հանդիսանում է, ԲՋՋի ղեկավարողանը մեկ ժողովից մինչև մյուս ժողովը։ Բյուրոն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ ԲՋԻՋում առնվազն 10 անդամ լինելու դեպքում՝ վոչ պակաս քան 3 հոգի. մինչև 25 անդամ լինելու դեպքում՝ 5 հոգի և 25 անդամից շատ լինելու դեպքում՝ 7 հոգի։ Բյուրոն ընտրվում է 6 ամսով։

4. ԲՋԻՋի բյուրոն իր կողմից առաջադրում է պատասխանատու քարտուղար, մասսայական աշխատանքի կազմակերպիչ, հեռատեսության և այլ աշխատանքների համար աշխատանքի ծավալման զուգընթաց, կազմակերպում և նույնիսկ խմբակներ։

5. Ռ.Բ.Ը. ԲՋԻՋի բյուրոն տանում է հետևյալ աշխատանքը՝

ա) Ոպերատիվ կերպով ղեկավարում է ԲՋԻՋի վողջ գործունեությունը պրակտիկ ձեռնարկումները։ Կազմակերպում է խմբակներ (կարճ տալիքների, հեռատեսության և այլն)։

բ) Ռայխորհրդի, կոմսոմոլի ԲՋԻՋի և ընդհանուր ժողովի ցուցմունքների համաձայն, մշակում է իր աշխատանքների պլանը։

գ) Խմբակների կազմակերպման, կոնսուլտացիաներ

ի և այլ միջոցներով ոժանդակում է ռադիո-սիրողներին, նրանց փորձնական և ստեղծագործական աշխատանքներում։

դ) Կատարում է Ռ.Բ.Ը. անդամների ընդունելություն, անցկացնում հաշվառում, նրանց մեջ բաշխում աշխատանքը և հետևում հանձնարարվածի կատարմանը։

յե) ԲՋԻՋի աշխատանքները համաձայնեցնում է հասարակական կամավոր մյուս կազմակերպությունների հետ կազմակերպում է նրանց հետ ձեռնարկումներ, յելույթներ և այլն։

զ) Նոր անդամներ է ներգրավում ռադիո սիրողներից և ռադիո-լսողներից ընդունում է անդամավճարները, տալիս է անդամատոմսերը։

ե) Կենսագործում է ԲՋԻՋի ընդհանուր ժողովի վորոշումները։

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Ռ.Բ.Ը. ԲՋԻՋի ընդհանուր ժողովն ընտրում է 3 հոգուց բաղկացած վերստուգիչ հանձնաժողով 6 ամիս ժամանակով։ Վերստուգիչ հանձնաժողովն աշխատում է Ռ.Բ.Ը. ռայխորհրդի վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարությամբ։

2. Վերստուգիչ հանձնաժողովն իրագործում է.—

ա) ԲՋԻՋի բյուրոյի դրամական ոպերացիաների հսկողությունն ու վերստուգումը՝ միջոցները նպատակին և նախահաշվով ճիշտ ծախսելու տեսանկյունով։

բ) Հաշվետվությունների տանելու ճշտության ստուգումը. նյութեղենի հաշվառումը, վատնումներ և հափշտակումներ թույլ չտալու նպատակով։

3. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է կատարում հարկ յեղած դեպքում, բայց վոչ ուշ քան 3 ամիսը մեկ անգամ, անպայմանորեն բյուրոյի անդամների մեկի մասնակցությամբ, վորը պարտավոր է ներկայացնել անհրաժեշտ տեղեկությունները։

ФИЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

4. Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքի մասին հաշվետվություն է տալիս Ռ.Բ.Ը ընդհանուր ժողովում, վոչ ուշ քան 6 ամիսը մեկ անգամ:

ԱՇԽԱՏԱՆՔՆ ՌԱԴԻՈՖԻԿԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Բջիջի կարեվորագույն և հիմնական խնդիրն է հանդիսանում աշխատանքը ռադիոֆիկացիայի բնագավառում, վորը կատարվում է.—

ա) Բջջի ժողովներում ռադիոֆիկացիայի ընթացքի և բջիջի անդամների ուժերով ռադիոֆիկացիայի պլանի վորոշ մասերի կատարման մասին զեկուցումներ դնելով:

բ) Զեռնարկության, սովխոզի, կոլխոզի, Մ.Տ.Կ. ռադիոֆիկացիայի ընթացքի վրա հասարակական հսկողության կազմակերպումը:

գ) Ռադիո ընդունման ցանցի աշխատանքին մշտապես հետևելու և ոժանդակություն կազմակերպելու, կցելով այդ գործին Ռ.Բ.Ը. անդամներին:

դ) Անգործության մատնված ռադիո ապարատների աշխատանքի վերականգնումը, ռադիո սիրողներից այդ նպատակով կազմակերպված վերանորոգման բրիգադների միջոցով:

յե) Ստեղծելով «ռադիոտեխնիկական շտապ ոգնություն» կետեր, լիցքային բազաներ, վերանորոգման արհեստանոցներ:

2. Ռադիոտների նոր կադրերի պատրաստումը խմբակների, կուրսերի, սեմինարների և այլ միջոցներով:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Մասսայական աշխատանքը պետք է յենթակա լինի ընկերության խնդիրների իրացմանը և ուղղված լինի.—

ա) Ռադիոյի կիրառման և ոգտագործման գործում՝ ռադիոտեխնիկական գիտելիքների և հիմնական ունակությունների աշխատանքը լայն ծավալելու ուղղությամբ:

բ) Ռադիոֆիկացիային և ռադիոշինարարության ոժանդակելու համար կոնկրետ, պրակտիկ միջոցառումների կենսագործման և կազմակերպման ուղղությամբ:

2. Ռադիոտեխնիկական գիտելիքները տարածելու և Ռ.Բ.Ը. անդամների ռադիոտեխնիկական դրագիտությունը բարձրացնելու նպատակով, բջիջը իրագործում է հետևյալ միջոցառումները՝

ա) Ստեղծում է ռադիոտեխնիկայի, կարճ պլիքների, հեռատեսության ուսումնասիրության կուրսեր, անց է կացնում դրավոր և բանավոր կոնսուլտացիա, ոգտագործելով ավելի վորակյալ ռադիո-սիրողներին, դրա հետ ներգրավելով նաև ռադիո- մասնագետներին:

բ) Կազմակերպվում է ռադիո սիրողական, ռադիո ապարատուրայի լավ մշակման կոնկուրս և մասնակցում է մարզային և համամիութենական կոնկուրսերին:

գ) Կազմակերպում է ռադիոսիրողների համար տեղական հատուկ հաղորդումներ, վորտեղ տրվում են պատասխաններ հարցերին և տրվում են ռադիոտեխնիկական մշտական կոնսուլտացիա:

դ) Կազմակերպվում է պարբերաբար ռադիոսիրողների ապարատուրայի ցուցահանդեսներ, դրանով հաշվի առնելով ռադիոսիրողների ստեղծագործական աշխատանքների արդյունքները:

յե) Ակումբին կից կամ այլ տեղեր ստեղծում է հատուկ ռադիո անկյուն՝ անհրաժեշտ պիտույքներով (ընդունիչ ապարատուրայի սխեմագիր, ինչպես և կառուցված ընդունիչը) և դրականությամբ (ռադիո գրականություն «Ռադիո ֆրոնտ» ժուրնալը):

զ) Կազմակերպում է մասսայական ռադիոլերեկոներ, ռադիոտեխնիկայի պրոպագանդի և ռադիոգիտելիքները մասսաներին տալու համար, ապարատուրայի ցուցադրում:

ե) Ամեն կերպ ոժանդակում է ռադիոսիրողներին,

նրանց ստեղծագործական աշխատանքներում, տալիս է նրանց աշխատանքին ռադիոֆիկացման շահերին հարկավոր տոն։

ը) Կազմակերպում է ինքնագործունեության հիմունքներով աշխատող սիրողական լաբորատորիաներ։

թ) Ստեղծում է ռադիոսիրողների կաբինետ, վորտեղ և կենտրոնացնում է աշխատանքը նրանց հետ։

ժ) Կազմակերպում է զանազան եքսկուրսիաներ դեպի ռադիոկայաններ, ռադիո գործարաններ, խոշոր ռադիո արհեստանոցներ, ռադիո լաբորատորիաներ։

ժա) Ամեն կերպ ոգնում է (ձեռնարկության բջիջը) կոլխոզի, սովխոզի, ՄՏԿ, յենթաշեֆ բջջին, նրա աշխատանքներում առանձնացնում է բրիգադա յենթաշեֆ ռայոնն ուղարկելու, գյուղի ռադիոսիրողներին ոգնելու համար։

ՇՇԽԱՏԱՆՔԸ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ոժանդակելով ռադիոհաղորդման կոմիտեին և ռադիո հանգույցային ռադիո հաղորդման վերակառուցման աշխատանքում Ռ.Բ.Ը. բջիջն այս բնագավառում անց է կացնում հետեվյալը՝

1. Հաղորդման շուրջը մասսայական աշխատանքը ծավալելու համար, հանգույցի աշխատակիցներին ոգնելու նպատակով տրամադրում է ռադիո սիրողներ։

2. Կազմակերպում է ռադիո հաղորդման մասսայական քննադատություն (անհատական և կոլեկտիվ հաղորդումների քննադատությունները)։

3. Մշտական հասարակական հսկողություն է ունենում տեղական, ռայոնական, մարզային ու կենտրոնական ռադիո հաղորդումների վորակի վրա։

4. Հարկ յեղած դեպքում կազմակերպում է ռադիո հաղորդման կոլեկտիվ լսելը, նախորոք լսողներին տեղեկացնելով հաղորդման ծրագրի հետ և հաշվի առնելով նրանց բոլոր պահանջները, ցանկությունները և առաջարկությունները ռադիոհաղորդման բովանդակության, հաղորդման ժամանակի և այլնի մասին։

5. Անց է կացնում ռադիո լսողների կոնֆերանսներ, ռադիոհաղորդման վորակի, թիմատիկայի և առանձին հարցերի մասին,

ԿԱՐՃԱԼԻՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՑԵՎՀԵՌԱՏԵՍՈՒԹՑՈՒՆ

Բջջի աշխատանքը կարճալիքի բնագավառում կառուցվում է հետևյալ սկզբունքներով՝

1. Կազմակերպում է կարճ ալիքի խմբակ, վորը մտնում է բջջի սիստեմի մեջ և աշխատում է նրա և Ռայխորհրդին կից կարճ ալիքի բյուրոյի ղեկավարությամբ։

2. Կարճ ալիքի աշխատանքը համարվում է բջջի վողջ աշխատանքի մասը և բջիջը ամեն կերպ ոժանդակում է այս աշխատանքին, ներդրավելով այս բնագավառում նոր կադրեր։

3. Ամեն կերպ ծավալելով կարճ ալիքի աշխատանքը, բջիջը կատարում է՝

ա) Կարճ ալիքների լայն կիրառումը տնտեսության կարևորագույն բնագավառներում (նորակառույցներ, կոլխոզ, սովխոզ, ՄՏԿ) և տնտեսական-քաղաքական կամպանիաներն անցկացնելիս։

բ) Կարճալիք և ուլտրակարճալիք՝ փոխադարձ կապի սպասարկումը և կադրերի պատրաստումն այս աշխատանքի համար։

գ) Ռադիոն ռազմական գործում կիրառելու հարցերի մասսայական ուսումնասիրությունը բջջի անդամների կողմից. Մերզեյի այբուբենի ուսումնասիրությունը, ընդունումը լսելով, ընդունող-հաղորդող ապարատուրայի ուսումնասիրությունը։

դ) Պաչը-ավիաքիմի հետ միասին տակտիկական ուսուցման կազմակերպումը, յերթեր, լրագրեր և նրանց սպասարկումը կարճալիքավոր ռադիոկայաններով։

յե) Փորձնական աշխատանքների ծավալումը կարճ-

ալիք և ուլտրակարճալիք ռադիո ապարատուրայի կառուցման ուղղությամբ:

զ) Տալիս է յերաշխավորություններ հաղորդիչներ ստանալու թույլտվության համար:

4. ԲՋԻՋՆ ամեն կերպ ոգնում է հեռատեսության բնագավառում աշխատող ռադիոսիրողներին, կազմակերպում և հեռատեսության ուսումնասիրության հատուկ խմբակներ, կազմակերպում է այս հարցի մասին կոնսուլտացիա և լայն կերպով պրոպագանդ է մղում հեռատեսությունը մեր տնտեսության մեջ կիրառելու նշանակության համար:

ՌԱԴԻՈՅԻ ՊԱՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Դպրոցներին, մանկ. տեխնիկական կայաններին, պիոներական կոլեկտիվներին կից կազմակերպվում են «Ռադիոյի պատանի բարեկամների» խմբակներ:

Ռադիո պատանի բարեկամների խմբակների խնդիրների մեջ մտնում են՝

ա) Ռադիոյի պատանի բարեկամների ռադիոտեխնիկական գիտելիքների բարձրացման աշխատանքը:

բ) Ընդունիչներ և հաղորդիչներ կառուցելու պրակտիկ աշխատանքը և այլն:

գ) Զեկուցումներ, զրույցներ, լեկցիաներ անցկացնելը, Ռ.Բ.Ը. ուժերով պատրաստած ռադիոսիրողների ապարատուրայի ցուցահանդեսների և ռադիո անկյունների կազմակերպումը:

դ) Մանկական ռադիոհաղորդումների կոլեկտիվ լսելը և քննարկումը, մասնակցությունը նրանց կազմակերպման մեջ:

յե) Ակտիվ ուժանդակություն դպրոցում, պիոներ կոլեկտիվում, կենցաղում ռադիոֆիկացիան անցկացնելու գործում:

զ) Ռադիոյի ոգտագործումն ուսումնական աշխատանքում:

ԲՋՋԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

1. ԲՋՋԻ նյութական բազան կազմվում է՝

ա) Անդամավճարներից կատարվող հատկացումներից (60%):

բ) Նախահաշվով կուլտ-մասսայական աշխատանքների համար կատարված հատկացումներից (պրոֆմիություններ):

գ) Հատկացումներ ռադիոֆիկացիայի պլանի վերջ մասերը կատարելու համար:

դ) Ցերեկույթներից, լեկցիաներից, ռադիո գրականություն տարածելուց, ցուցահանդեսներից ստացված յեկամուտները և այլն:

յե) Ռ.Բ.Ը. Ռայխորհրդի և այլ կազմակերպությունների դոտացիաներից:

2. Ամեն կերպ ամրապնդելով և լայնացնելով իր նյութական բազան ԲՋԻՋՆ ապահովում է անդամավճարների ժամանակին գանձումը:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-АРМ ССР
Ս. ԱՄ. Ա. Մարտիրոսյան
Ս. ՄԱՍՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0222982

55.125

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР